

ԱՐՑԱԽԻ ԹԵՄ ԿԱՏԱՐԱԾ ՄԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ՄԵՐ ԱՂՕԹՔՆ ԵՆՔ ՎԵՐԱՌԱՔՈՒՄ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՀԱՅՑՈՒՄ

Բարերար եւ բազումողորմ Աստուած, ի խորոց սրտի աղերսում եմ Քեզ, որ հայրախնամ սիրոյդ ճառագայթները միշտ ափռես Արցախ աշխարհի եւ Արցախցի ժողովրդի վրայ: Օրհնիր անմեռ յիշատակը նրանց նախորդ սերունդների, որոնք դարեր շարունակ իրենց կեանքն ապրեցին միշտ հաղորդ լինելով ընդ Քեզ՝ իրենց լեռների ու դաշտերի, իրենց եկեղեցիների ու վանքերի, իրենց կրթական յարկերի եւ դպրութեան օջախների մէջ:

Արդարութեան Արեգակի՝ Քո Միածին Որդւոյդ եւ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի լոյսը արեւի լոյսին պէս թող մշտապայծառ շողայ ապրողների կեանքում: Տե՛ս, լեռներն ու դաշտերը կանաչել են, Քո շնորհած կեանքի տրոփն ուժեղացել է, յոյսի շողը առատացել, հաւատքի զօրութիւնը աճել եւ սէրն ամենուր ափռուել:

Թող ի սպառ դադարի պատերազմը. թող տիրեն սէրն ու խաղաղութիւնը, հաշտութիւնն ու բարօրութիւնը:

Տուր Քո անսպառ զօրութիւնը, որպէսզի կարողանան ստեղծագործական կեանքով առատացնել Քո շնորհներն ու բարիքները Արցախում:

Քաջութեան ու առաքինութեան շնորհներով օժտիր Քո զաւակներին, որոնք ի գին իրենց արեան պաշտպանում են իրենց հայրենի աշխարհն ու ժողովուրդը: Բուժիր վէրքերը վիրաւորներին, առողջութիւն պարգեւիր հիւանդներին, յոյս ներշնչիր լքեալներին. օրհնիր վաստակը աշխատողներին, զի տացեն պտուղ «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր»:

Եկեղեցւոյդ սպասաւորներին, պետական ու քաղաքային իշխանութիւններին, հասարակական, բարեսիրական եւ մշակութային կազմակերպութիւններին, յատկապէս մատղաշ դպրոցական երեխաներին, պարգեւիր Քո ամենախնամ իմաստութիւնն ու սէրը վասն փառաց քոց, վասն շինութեան Եկեղեցւոյդ եւ վասն բարեկարգ պահպանութեան եւ յառաջագնաց կենաց Արցախու թեմիդ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
31 մայիս 1995 թ.